



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝	<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Յա. Զարոբյանի անվան N 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ	
Առարկա՝	Դասվար	
Թեմա՝	Միջառարկայական կապերի հաստատման միջոցով նպաստել տարրական դասարաններում դասավանդվող ուսումնական առարկաների դասավանդման գործընթացի արդյունավետության բարձրացումը	
Վերապատրաստող, մենթոր՝	Արմենուհի Մելքոնյան	
Ուսուցիչ՝	Սուսաննա Մկրտչյան	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Գլուխ 1. Ուսուցման ուսումնառության ժամանակակից միտումներ	7
Գլուխ II. Ինտեգրված թեմատիկ ծրագրերի ստեղծման տեխնոլոգիաներ.....	16
2.1. Ինտեգրված ուսումնական ծրագրերի էությունն ու տեսական հիմունքները	16
2.2 Ինտեգրված ուսումնական ծրագրերի տեսակները	24
Եզրակացություն.....	31
Գրականության Ցանկ	31
Հավելված.....	33

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային քաղաքակրթության կայացման, գիտության ու կրթության ժողովրդավարացման, գլոբալացման և միջազգայնացման, նոր մանկավարժական տեղեկատվական և թվանիշային տեխնոլոգիաների և մուլտիմեդիական կրթական միջոցների զանգվածային ներդրման պայմաններում ի հայտ է գալիս միասնական կրթական տարածքի, միջավայրի ստեղծման անհրաժեշտություն և միտում:

Դպրոցն իր սկզբնավորման ժամանակներից միշտ եղել է հայ ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը և առաջընթացի գրավականը:

Կրթական ներկա համակարգը, մասնավորապես՝ դպրոցը, այսօր կանգնած են ուսուցման նոր պահանջների առջև, որոնք պետք է հաշվի առնեն ուսուցման հումանիտար բովանդակությունը, մարդասիրական արժեքները և սովորողների քաղաքացիական գիտակցությունը ձևավորելու, հասարակության փոփոխվող պայմաններին աշակերտի հարմարվելու մեխանիզմները զարգացնելու, ուսումնական առարկաների՝ յուրաքանչյուր աշակերտին հասցեագրված ուսուցման-ուսումնառության ներուժն ավելի հզորացնելու և լիարժեք իրագործելու անհրաժեշտությունը:

Այսօր դպրոցի ուսուցիչների համար ոչ միանշանակ և բարդ իրավիճակ է ստեղծվել: Մանկավարժական գիտության և իրականության մեջ լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել, որոնք հետևանք են հետարդյունաբերական հասարակության զարգացման, որը որոշ հետազոտողներ կոչում են նոոսֆերայի դարաշրջան:

Հասարակության նորացումը անպայմանորեն ենթադրում է նաև կրթության նորացում, իրական շրջադարձ դեպի մարդը, անհատը:

Այսօր ոչ ոք չի կասկածում մարդուն որպես բարձրագույն արժեք, որպես «<իրերի չափանիշ>> ընդունելու, նրա ազատ զարգացման, իր ընդունակությունների ու հետաքրքրությունների հաշվառման ու պահանջմունքների իրագործման իրավունքների ճանաչման անհրաժեշտությունը: Այսօր ակնհայտ է նաև մանկավարժի մասնագիտական առաքելության կարևորությունը: Դեռ ավելին, առավել խորությամբ են ուսումնասիրվում ուղեղի մեխանիզմների և բարձրագույն հոգեկան գործառույթների նյարդաֆիզիոլոգիական և նյարդահոգեբանական տվյալները, որոնք պետք է հաշվի առնվեն ուսման ընթացքում: Խոսքը ոչ միայն դաստիարակելու, ուսուցանելու արվեստի, ուսուցչի մասնագիտության նկատմամբ հետաքրքրությունը պահպանելու, այլ նաև դրա մշակութային էությունը բացահայտելու մասին է: Ուսուցչի անձնային և մտավոր

զարգացման համակարգում մեծ նշանակություն է տրվում նաև քաղաքացիական որակներին: Ուսուցիչների մասնագիտական զարգացման համակարգի նկատմամբ նոր հասարակական պահանջների հաշվառումը ենթադրում է ուսուցչի աշխատանքի որակի քննադատական վերլուծություն՝ նոր պահանջների ու նպատակների հաշվառմամբ:

Եթե մանկավարժության ավտորիտար-հրամայական մոտեցման պարագայում անտեսվում և նվազեցվում էին սովորողների անհատական առանձնահատկությունները և սովորողն օտարվում էր սեփական ուսումնառության, կրթության գործընթացին առնչվող որոշումների կայացումից, ապա ժամանակակից հումանիստական հարացույցի հիմքում անձնակենտրոն մոտեցումն է, այսինքն՝ հասարակության, դպրոցի, մանկավարժների ուշադրության կենտրոնում է սովորողը՝ իր տարիքային և անհատական առանձնահատկություններով, պահանջմունքներով, հետաքրքրություններով: Այս պայմաններում սովորողը դառնում է ուսուցչի համախոհը, ուսումնական գործընթացի իրավահավասար մասնակիցը, սեփական կրթության համահեղինակը: Ուսման գործընթացի մասնակիցների փոխհարաբերությունները կառուցվում են ժողովրդավարության, փոխըմբռնման, փոխադարձ հարգանքի սկզբունքների հիման վրա: Այսպիսով՝ կրթության հումանիզացիան ենթադրում է անձի զարգացում՝ ընդհանուր մշակութային, սոցիալքարոյական և մասնագիտական տեսանկյուններից:

Հասարակության սոցիալական պատվերի համաձայն կրթական համակարգը կարևորում է, թե հասարակությունը վաղն ինչ քաղաքացի է ուզում ունենալ: Այս համակարգի պահպանողականության և կենսունակության շնորհիվ է, որ, չնայած կատարված փոփոխություններին, չի ընդհատվում կրթության՝ որպես լայն իմաստով մշակույթի ժառանգականությունը:

Կրթության ոլորտի բարեփոխումների ժամանակակից շրջանի կարևորագույն մաս են կազմում հանրակրթության առաջնային ուղղությունները, որոնք ընդգրկում են նաև ուսուցման բովանդակային հիմնահարցերը, որը ամբողջական բարդ համակարգ է, իր մեջ ներառում է մարդկանց, կառույցներ, փոխհարաբերություններ, գաղափարախոսական նպատակներ, իմացական նյութ, շարժառիթներ և ցանկություն:

Գիտելիքներից բացի սովորողին անհրաժեշտ է զարգացնել սովորողի կարողությունները, հմտությունները, ռազմավարությունը՝ ընդգրկելով նրան ճանաչողական գործունեության մեջ, ստեղծագործական միտք ձևավորել, ուղղորդել նրա ներքին ուժերն ու հնարավորությունները:

Ինչպես արդարացիորեն նշվում է Հանրակրթության Պետական Կրթակարգում՝ «Կրթության բովանդակությունը ներկայացված է մեծ թվով առարկաներով, ուսումնական նյութը պարունակում է անհիմն կրկնություններ, անբավարար է իրականացվում բովանդակության ինտեգրումը» (Հանրակրթության Պետական Կրթակարգ, 2004, էջ 8):

Գլխավոր, հիմնադրույթն այն է, որ մեզ շրջապատող աշխարհը միասնական ու ամբողջական է, ուստի ուսուցման առավել արդյունավետ տեսակը միավորված ամբողջական ուսուցումն է:

Այսպիսով, ընտրված թեման խիստ **արդիական** է, քանզի կրթության բովանդակությունն առանձին առարկաներից պատրաստի գիտելիքների ամբողջությունն չէ, այդպիսի ընկալումը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին և աշխարհի մասին մասնատված, ոչ ամբողջական պատկերացում է տալիս:

Աշխատանքի **նպատակն** է զարգացնել և խորացնել ինտեգրված ուսումնական ծրագրերի ստեղծման նոր մոտեցումները, օրինաչափություններն ու սկզբունքները:

Այս ընդհանուր նպատակից բխում են հետևյալ **խնդիրները**.

- ուսումնասիրել ինտեգրված ուսումնական ծրագրերի ստեղծման մեխանիզմը
- վերլուծել ինտեգրված ուսումնական ծրագրերի կառուցվածքն ու սկզբունքները

Որպես մանկավարժական գործընթացի մեթոդաբանական կառուցվածքային մոդել ամրագրվել են հետևյալ բաղադրիչները՝ կրթական գործընթացի սուբյեկտներ՝ ուսուցիչ-աշակերտ, ինչպես նաև նպատակադրման և ուսուցման բովանդակության դիդակտիկական-մեթոդական կատեգորիաները: Փաստորեն ուսուցման բովանդակությունը ուսուցչի և աշակերտի միջև միջնորդավորված օղակ է, որն այն իմաստային դաշտն է, որտեղ ծավալվում է նրանց փոխներգործությունը:

Յուրաքանչյուր թեմատիկ միավոր ուրվագծում է թեմատիկայի, գիտելիքների, կարողությունների, հմտությունների, անհրաժեշտ տեղեկատվության այն դաշտը, որն անհրաժեշտ է անձի սոցիալականացման համար: Մյուս կողմից պայմանավորում է մեկ այլ կարևոր ֆունդամենտալ հարց՝ ինչպե՞ս սովորեցնել (Соболева Е.А., 2008, с. 244):

Միավորված ծրագրերը բնութագրվում են գիտության, տեխնիկայի, արվեստի տարբեր ոլորտներից գիտելիքների փոխներթափանցմամբ: Ինտեգրացիայի հիմք կարող են լինել.

- Բովանդակությունը (թեման, հասկացությունը, բովանդակային առանցքը)
- գործողություններն ու հմտությունները

- վերոհիշյալ երկուսը միասին (ամբողջական)

Միավորված ծրագրերի առանձնահատկությունն այն է, որ այն կառուցվում է սովորաբար հետևյալ սխեմայով՝ մի ոլորտի գիտելիքները հիմնվում են մի այլ ոլորտից ձեռք բերված գիտելիքների վրա: Այս մոտեցումը ենթադրում է համալիր պլանավորում, տարբեր բնագավառներից գիտելիքների, փաստերի ու երևույթների սահմանում և իմաստավորում, ինչպես նաև դրանց գնահատում, ինչը խթանիչ գործոն է սովորողների ճանաչողական և ստեղծագործական գործունեության համար: Այս մոտեցման հիմնական վճռորոշ գործոնն այն է, որ ուսումնական առարկաները տարանջատված չեն միմյանցից, այլ սերտորեն փոխկապակցված են թեմայով, առանցքով:

Աշխատանքն ունի հետևյալ **կառուցվածքը**՝ այն բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից:

Ներածությունում տրված են թեմայի

- արդիականությունը
- նպատակը
- խնդիրները
- կառուցվածքը

Առաջին գլխում քննության է առնվում

- ուսումնական ծրագրերի ստեղծման ժամանակակից մոտեցումները

Երկրորդ գլխում վերլուծվում են

- ինտեգրված ծրագրերի էությունը (տեսական հիմունքներ) և ստեղծման հիմնական մոտեցումները
- ինտեգրված ուսումնական ծրագրերի տեսակները
- ինտեգրված թեմատիկ միավորը

Եզրակացությունում իմի են բերված աշխատանքի արդյունքները:

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Ժամանակակից մոտեցումներ ուսումնական ծրագրերի ստեղծմանը

Այսօր հետազոտողների, մանկավարժների և ուսուցիչների ուշադրության կենտրոնում են գտնվում վերափոխվող հասարակության՝ կրթության և դպրոցի վրա ունեցած ազդեցության հիմնախնդիրները և դրանց հետ կապված կրթական համակարգերի հայեցակարգի փոփոխության և մեթոդաբանական հիմնավորումները: Հայաստանում նույնպես, ինչպես և ամենուր, կրթական համակարգը վերափոխությունների և բարեփոխությունների ընթացքում է գտնվում:

Վերափոխվող հասարակությունը դպրոցից պահանջում է նոր պայմաններում ուսուցման և ուսումնառության համակարգի ակտիվ փոփոխության, կենսադիրքորոշման գիտակցված ընտրության, նպատակների ինքնուրույն ընտրության և գործունեության ձևերի սահմանման, անկանխատեսելի իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու և գնահատելու կարողություններ: Սա իրականում նշանակում է հրաժարվել այն ճանապարհից, որը ուսուցումն ընկալում էր՝ որպես **գիտելիքների որոշակի քանակի փոխանցում**, իսկ դաստիարակությունը՝ որպես **որոշակի կանոնների ուսուցում**:

Վերոհիշյալ ճանապարհից հրաժարվելը ենթադրում է նոր մոտեցում կրթության բովանդակությանը, ինչպես նաև ուսումնական նյութերի կիրառման կայացած ռազմավարության արմատական վերանայում՝ նախ և առաջ՝ ուսուցման հայեցակարգերի, չափորոշիչների և ուսումնական ծրագրերի առումով: Կրթության բովանդակության ընկալումը՝ որպես պատրաստի գիտելիքներ առանձին առարկաներից, չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, աշխարհի մասին մասնատված, ոչ ամբողջական պատկերացում է տալիս: Հնարավոր լուծումներից մեկը միավորված դասընթացների և ծրագրերի ստեղծումն է, որը միասնական մոտեցում կցուցաբերի երևույթների ընկալմանը, գիտակցմանն ու ըմբռնմանը:


Գլխավոր, ընդունված հիմնադրույթն այն է, որ մեզ շրջապատող աշխարհը միասնական ու ամբողջական է, ուստի ուսուցման առավել արդյունավետ տեսակը միավորված ամբողջության ուսուցումն է:

Միավորված ծրագրերը բնութագրվում են գիտության, տեխնիկայի, արվեստի տարբեր ոլորտներից գիտելիքների փոխներթափանցմամբ:

Ուսումնական ծրագիրը <<դպրոցի գործունեության սիրտն է>>, որով մի կրթական համակարգը տարբերվում է մյուսից (J. Rich, 1992, էջ 529, հղումը ըստ ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում ձեռնարկի): Այն գործում է՝ որպես ուսումնական վերջնական նպատակներ սահմանող կազմակերպված ծրագիր: <<Ուսումնական ծրագիր>> հասկացությունը ներառում է սովորողի կողմից ձեռք բերված ամբողջ փորձը:

Ջոն Ռիչը ուսումնական ծրագիրն ավելի լայն է ընկալում՝ <<սովորողին դիտարկելով որպես օրգանիզմ՝ դասարանական և արտադասարանական ուսումնական պայմաններում փոխներգործության մեջ>>: (J. Rich, 1992, էջ 531, հղումը ըստ ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում ձեռնարկի):

Գծագիր 1.3.1.



Աղբյուրը՝ Ջ.Ռիչ, 1992, էջ 531:

Կան ուսումնական ծրագրերի մշակմանը բազմաթիվ մոտեցումներ: Մասնագիտական գրականության մեջ ընդունված են հետևյալ հինգ հիմնական ուղղությունները.

- Ճանաչողական
- Ուսումնական ծրագիրը՝ որպես տեխնոլոգիա
- Ուսումնական ծրագիրը՝ ինքնաիրագործման համար
- Ուսումնական ծրագիրը՝ սոցիալական վերափոխման համար
- Ակադեմիական/ավանդական ռացիոնալիզմ:

Ճանաչողական մոտեցում

Այս մոտեցման նպատակը սովորողի ճանաչողական կարողությունների զարգացումն է: Ճանաչողական մակարդակից դուրս գտնվող մյուս գործոնները հաշվի չեն առն-

վում: Ճանաչողական ուղղվածություն ունեցող ուսումնական ծրագրերը չեն առնչվում սոցիալական գործոններին: Այդ մոտեցման հիմնական մասը և ընդհանրացված մտավոր կարողությունները զարգացման հոգեբանության մեջ մշակվել են Ջ. Բրուների կողմից: Այն հայտնի է՝ որպես «գիտական ծրագիր» (science curriculum)

(E. Eisner, E. Vallance, 1974, էջ 7, հղումը ըստ ուսումնառությունն ու դասավանդումը կրասեր դպրոցում ձեռնարկի):

Ուսումնական ծրագիրը՝ որպես տեխնոլոգիա

Ինչպես և առաջին դեպքում, այս մոտեցումը կենտրոնանում է ճանաչողական ունակությունների զարգացման վրա: Մա տարբերվում է առաջինից նրանով, որ այս տեխնոլոգիայի շնորհիվ շեշտը դրվում է գիտելիքների հաղորդման վրա, որն էլ հեշտացնում է ուսումը: Որպես տեխնոլոգիա դիտարկվող ուսումնական ծրագիրը ենթադրում է մուտքային կամ ելակետային տվյալների և կառուցվածքների վերլուծություն: Այստեղ օգտագործվում են այնպիսի տերմիններ, ինչպիսիք են՝ «մուտք», «ելք», «վարքագիծ», «կիրթոնետիկական կադապարներ» և այլն: Սովորողի պահանջմունքները հաշվի չեն առնվում:

Ինքնիրագործումը/ինքնաճանաչումը՝ որպես ամբողջական փորձ

Շեշտը դրվում է այն բանի վրա, թե ինչ պետք է սովորեցնել աշակերտներին, այսինքն՝ ուսուցման բովանդակության վրա: Միաժամանակ կարևորվում են աշակերտների անձնական կարիքներն ու անհատական ինտեգրացման անհրաժեշտությունը:

Սոցիալական վերակառուցման կարևորությունը

Այս մոտեցման դեպքում հիմնական շեշտը դրվում է կրթության և ուսումնական ծրագրերի բովանդակության վրա՝ որոշակի սոցիալական համատեքստի սահմաններում: Սոցիալական պահանջմունքները գերակայում են անձնական կարիքների նկատմամբ:

Ակադեմիական/ավանդական ռացիոնալիզմ


Այս մոտեցման հիմքում ընկած է ամեն ինչ սովորեցնելու գաղափարը, որպեսզի «զարգանա երեխայի մտածողությունը՝ ձեռք բերելով հին հունական մշակույթից մինչ

օրս ստեղծված մարդկային արժեքները>>: (E. Eisner, E. Vallance, 1974, էջ 12, հղումը ըստ ուսումնասիրությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում ձեռնարկի):

Ռալֆ Թայլերը նշում է ուսումնական ծրագրերի ստեղծման բնագավառում 20-րդ դարի հինգ ամենաեական իրադարձությունները՝ ուսումնական ծրագրերի կարեվորության ճանաչումը, Դյուիի մենագրությունը՝ կրթության մեջ հետաքրքրության և ջանքերի վերաբերյալ, կրթական հետազոտությունների ազգային ընկերության 26-րդ տարեգիրքը, ուսումնական ծրագրերի հետազոտության ընկերությունը և ուսումնական ծրագրերի ստեղծման 1930-ականների փորձը:

Չթերագնահատելով թվարկված մոտեցումներից ոչ մեկին՝ պետք է հիշատակել ուսումնական ծրագրերի հետ կապված ամենանշանակալի իրադարձությունը՝ Ջոն Դյուիի՝ կրթության մեջ հետաքրքրության և ջանքերի մասին մենագրության շնորհիվ երեխան՝ իր հետաքրքրություններով և աշխարհընկալմամբ, հայտնվում է կենտրոնական դերում: Ակնհայտ է, որ երբ երեխաները <<հետաքրքրվում են որևէ նախագծով կամ դասով, նրանք ավելի շատ ջանք են գործադրում սովորելիս, քան այն դեպքում, երբ ծրագիրը կամ դասը անհետաքրքիր են>>: Դյուիի՝ երեխաների մասին կենտրոնական գաղափարի համաձայն ուսումնական ծրագրի զարգացման ընթացքը դիտարկելիս մենք կարող ենք <<ուսումնական ծրագրի զարգացման համակարգի միջոցով հասնել ուսման արդյունքների՝ <<ելքի>> կարևորմանը>>:

Գծազիր 1.3.2.



Կրթական ծրագրի չափանիշները

Ըստ Ռիչի՝ ուսումնառության արդյունքները կարող են որոշվել մի շարք չափանիշներով՝ դասի ընթացքում ակտիվությամբ, պատասխաններով, նախագծերի իրագործմամբ, խմբային գործունեությամբ և աշակերտի գործունեության ստուգմամբ: (Ջ. Ռիչ, 1992, էջ 533, հղումը ըստ ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում ձեռնարկի):

Ուսումնական ծրագրի ստեղծման յուրաքանչյուր ուղղություն գործ է ունենում մեկ կամ մի քանի հիմնական հասկացությունների հետ՝ սովորող, ուսումնական առարկա, հասարակություն, այսինքն սոցիալական համատեքստը, և ծրագրի ստեղծման համադրական մեխանիզմ: Ուսումնական ծրագրի մշակման նպատակը սովորողի պահանջմունքների բավարարումն է:

Երկրորդ հասկացությունը ընդգծում է ուսումնական առարկայի դերը: Սա առարկայական ուսումնական ծրագիր է: Մինչդեռ իրականում ուսումնական ծրագիրը մի դինամիկ, բարդ համակարգ է, ոչ թե պարզապես կոնկրետ ուսումնական առարկա:

Երրորդ ուղղությունը ընդգրկում է հասարակության պահանջները, այն է՝ ինչպես կարող է անհատը մասնակցել համայնքի կյանքին: Ի լրումն այս տեսակետի՝ Ն. Չարտերսը աշխատանքի վերլուծության մեթոդի միջոցով արժեքավոր ներդրում կատարեց ուսումնական ծրագրերի հետազոտության մեջ:

Չորրորդ ուղղությունը՝ համադրական մոտեցումը, համադրում է վերը նշված ուսումնական ծրագրերի բոլոր էական խնդիրները: Նմանատիպ խնդիրներ են առաջարկվել Կ. Կոլլերի կողմից, այն է՝ բովանդակություն, ուսուցման ռազմավարություն, ուսուցման միջավայր, աշակերտի վարքագիծ:

Այսօր վճռորոշ նշանակություն ունի սովորողի՝ որպես ակտիվ մասնակցի դերը, այդ իսկ պատճառով անձնակենտրոն ուսումնական ծրագիրը խիստ որոշիչ նշանակություն ունի: Հենց Դեյվիդ Նունանն էր, որ հատուկ ստեղծեց <<աշակերտակենտրոն ուսումնական ծրագիրը>>, որտեղ ելակետն է, թե <<ի՞նչ են անում ուսուցիչներն իրենց դասարաններում>>:

Ուսումնական ծրագրերի կառուցվածքը

Ուսումնական ծրագրերը մշակելիս ԱՄՆ-ում, ինչպես նաև շատ այլ երկրներում, մեծ տեղ է հատկացվում ծրագրերի կառուցվածքին ու ներդրմանը: Ծրագրի ներդրման վրա որոշակի ազդեցություն են ունենում հետևյալ գործոնները:

Ազգային մակարդակում	համապատասխանեցում համապետական հիմնախնդիրներին գործող օրենսդրությանը և պետական ֆինանսավորման հատկացում.
----------------------------	--

Նահանգային Մակարդակ	Համապատասխանեցում նահանգի օրենսդրությանը և ֆինանսավորման հատկացում, ծրագրի վերջնական արդյունքներին ներկայացվող պահանջներ և ծրագրի նպատակներին հասնելու հասնելու համար անհրաժեշտ ժամանակի սահմանում
----------------------------	--

Տարածաշրջանային Մակարդակ	Ծրագրին անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրում և անձնակազմի ընտրություն
---------------------------------	--

Դպրոցական մակարդակում`	Տրամադրված միջոցների բաշխում և ծրագրի իրականացում
-------------------------------	---

Դասարանական մակարդակում	Նյութի օգտագործման և ուսուցման մեթոդների վերաբերյալ ուսուցիչների կողմից որոշումների կայացում
--------------------------------	--

Աղբյուրը` Ջոն Հուվեր 1988, պարագր. 5:

Արդյունքի վրա հիմնված, միավորված ծրագիրը <<նորարարական ուսումնական ծրագիր>> է, որը նաև միավորված <<միջառարկայական ծրագիր>> է: Այս մոտեցման շնորհիվ ընկալվում են ծրագրի առանձին միավորները, որոնք կենտրոնացած են որոշակի խնդիրների լուծման վրա, միջառարկայական են, ներկայացված են

փոխներգործուն, համագործակցական ձևով և գրավիչ են բազմաթիվ աշակերտների համար:


Արդի հետազոտություններում ուսումնական ծրագիրը չի դիտարկվում որպես իրարից անջատ փաստերի մի փակ համակարգ, այլ որպես արձագանք հասարակության և անհատի պահանջմունքներին, որը պետք է համապարփակ մտածողություն, փոխներգործություն և կյանքի հմտություններ զարգացնի: Ուսումնական ծրագիրը զարգանում է ավանդական՝ փաստերի վրա հիմնված կադապարից դեպի հասկացությունների /գաղփարների վրա հիմնված ծրագիր:

Ի՞նչ է հասկացությունը / գաղափարը

Ըստ Էրիքսոնի՝ հասկացությունը <<մի մտային կառույց է, որն անժամկետ է, համընդհանուր և վերացական>>: Համանման տեսակետ է ներկայացնում նաև Հ. Տաբան՝ հասկացությունները բնորոշելով որպես <<հիմնարար կազմակերպիչներ>>, որոնք առարկաների, թեմաների ընդհանրացումների և մտածողության մակարդակների միջև <<կամուրջների>> դեր են կատարում: Ըստ հեղինակի՝ <<համաչափություն>> գաղափարն, օրինակ, կարող է տարբեր իմաստներ արտահայտել, որոնք բնորոշ են գիտության տարբեր ճյուղերի, օրինակ՝ արվեստին կամ երաժշտությանը, բայց դրա նկարագրությունները ներառում են նույն հասկացությունները՝ հավասարակշռություն, ձևի խիստ համապատասխանություն և այլն...

Հասկացությունները/գաղափարներն անչափ կարևոր են միջառարկայական միավորված ուսումնական ծրագրեր մշակելիս

Գծագիր 1.3.3



Աղբյուրը՝ Հ. Էրիքսոն, 1995, էջ 97:

Ինչպես արդեն նշվել է, մեկ այլ մոտեցում է կիրառվում արևմտյան մանկավարժների կողմից, որը հայտնի է՝ որպես «արդյունքների վրա հիմնված» ուսումնական ծրագիր: Այն ենթադրում է տեղաշարժ՝ բովանդակությունից դեպի աշակերտը: Հիմնվելով Բենջամեն Բլումի առաջադրած թեզերի, ինչպես նաև բովանդակությունը՝ որպես հիմնական գաղափարների և թեմաների ամբողջություն կառուցելու սկզբունքների վրա՝ մենք կարող ենք համեմատել ավանդական նպատակները և տվյալ պահին աշակերտների դրսևորած արդյունքները:

Ավանդական նպատակներ

- Նպատակները չափելի են և գնահատվում են տրված տարբերակներից ճիշտն ընտրելու տեխնիկայի, այսպես կոչված՝ «թուղթ ու գրիչով» կատարվող թեստերի միջոցով
- Նպատակն այն է, թե սովորողներն **ինչ պետք է իմանան**. հիմնական շեշտը դրվում է ուսումնական առարկաների բովանդակության յուրացման վրա:
- Որոշակի նպատակներ էլ հաշվի են առնում առավել հուզական ոլորտները, օրինակ՝ «ընթերցանության այնպիսի նյութերի ընտրություն, որոնք բավա-կա-նություն են պատճառում»:
- Ընդհանուր ուսումնական նպատակները ձևակերպելիս գործընթաց ցույց տվող բառեր են օգտագործվում, օրինակ՝ «հասկանալ թվերը և համարակալումը»:
Բայց աշակերտների «հասկանալը» գնահատելն իր հերթին հիմնված է ավելի ցածր մակարդակի որոշակի նպատակների վրա, ինչպիսիք են, օրինակ, «փոխարինող օրենքի» օրինակները ճանաչելը՝ իմաստային համատեքստերում գիտելիքը կիրառելու միջոցով ընկալման խորությունը ցուցադրելու փոխարեն:

Արդյունքներ/ելքեր

- Արդյունքն այն է, թե ինչ ենք ուզում, որ աշակերտները կարողանան անել, և ինչ ենք ուզում, որ նրանք իմանան:
- Արդյունքները չափվում են աճման սկզբունքով՝ աշակերտների գործունեության գնահատման միջոցով:

- Արդյունքները կենտրոնանում են սովորողների անձնական ունակությունների կամ բանիմացության վրա, ինչպիսիք են, օրինակ, մտածելու կամ հաղորդակցվելու ունակությունը:
- Արդյունքները զարգացնում են <<ամբողջ կյանքի ընթացքում սովորելու>> հմտություններ:
- Արդյունքներն առավելապես հիմնվում են ձեռքբերումների անհատական, ոչ թե միօրինակացված (ստանդարտացված) չափանիշների, այսինքն՝ թեստերի միջոցով գնահատման վրա:
- Աշակերտների գործունեության միջոցով ձեռք բերված արդյունքները կախված են առարկայի՝ սովորողների զարգացմանը համապատասխանող բովանդակության համատեքստից:
- Ի լրումն չորս կամ հինգ գործընթացային արդյունքների՝ նահանգային և շրջանային կառույցները սովորաբար սահմանում են մեկ կամ երկու վերջնական արդյունքներ՝ կապված բովանդակության յուրացման հետ:

ԳԼՈՒԽ II. ԻՆՏԵԳՐՎԱԾ ԹԵՄԱՏԻԿ ԾՐԱԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2.1. Ինտեգրված ուսումնական ծրագրերի էությունն ու տեսական հիմունքները

Ի՞նչ է ուսումնական ծրագիրը

Ուսումնական ծրագիրն, ըստ էության, արձագանք է հասարակության և անհատի պահանջմունքներին: Ի պատասխան հասարակության «սոցիալական պատվե-րի»՝ ուսումնական ծրագրերը սահմանում են, թե ինչ գիտելիքներ, կարողություններ ու արժեքներ են անհրաժեշտ աշակերտներին, և ինչ մեթոդներով ու հնարքներով է հնարավոր հասնել դրան:

Միավորված ուսումնական ծրագրեր

Հովարդ Գարդները և Վերոնիկա Բոյքս-Մանսիլլան ցույց են տալիս ընդհանուր հասկացողություններից դեպի միջառարկայական, բազմառարկայական և անդրառարկայական հետազոտություններ տանող ուղին: Այս գործընթացը ներառում է հետևյալ փուլերը՝ ընդհանուր հասկացողություններ, մինչև առարկան ուսումնասիրելը ունեցած կամ նախառարկայական գիտելիքներ, առարկայի իմացություն և առարկայի շրջանակներից դուրս՝ լայն գիտելիքներ:

Ի՞նչ է ուսումնական ծրագրի ինտեգրումը

Ուսումնական ծրագրի ինտեգրման մասին գաղափարը ձևավորվել է 1980-ական թվականի վերջերին: Դրա հեղինակը գերմանացի փիլիսոփա և մանկավարժ Յոհան Ֆրիդրիխ Հերբարտն էր, որը բազմաթիվ հետևորդներ ունեցավ ինչպես իր ժամանակակիցների շրջանում, այնպես էլ իրենից հետո: Շարունակելով և զարգացնելով Հերբերտի տեսությունը, նրա հետևորդները սկիզբ դրեցին մի շարժման, որը մանկավարժության մտքի պատմության մեջ հայտնի է «հերբարտականների շարժում» անունով: Իսկ ո՞րն էր այդ շարժման էությունը: Հերբերտ առաջինն էր, որ հանդես եկավ ուսումնական առանձին (անկախ) առարկաները որոշակի թեմաների շուրջ միավորելու առաջարկով և այդ երևույթն անվանեց «գիտությունների իրնտգրում»: 1920-ական թվականներին այդ առաջադիմական շարժումը ղեկավարում էր Ջոն Դյուին: Նա գտնում

եր, որ բոլոր գիտությունները սկիզբ են առնում <<մեր միակ մոլորակի և մեր միակ կյանքի պահանջներից: Միամտություն է կարծել, թե երկրագունդը կազմված է տարբեր բնույթներ ունեցող առանձին շերտերից՝ մաթեմատիկական, ֆիզիկական, պատմական և այլն: Մեր տնական գոյությունն այս շերտերից միայն մեկում խիստ թեական կլիներ: Մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ բոլոր ոլորտները միահյուսված են: Բոլոր գիտությունները բխում են մեկ ընդհանուր՝ աշխարհում առկա հարաբերություններից: Երբ երեխան այս ընդհանուր աշխարհին հարաբերվում է բազմազան, բայց կոնկրետ ու գործուն կապերով, նրա գիտելիքը, բնականաբար, ընդհանրական է: Գիտության ճյուղերի զուգորդումն այլևս խնդիր չէ: Ուսուցիչն արդեն տարբեր հնարքների դիմելու կարիքը չունի՝ պատմության դասին թվաբանական տարրեր ներմուծելու համար և այլն>>:

Ջոն Դյուին և նրա կողմնակիցները կրթակարգի հիմքում դնում էին աշակերտների անձնական և հասարակական հետաքրքրությունները և առաջ էին քաշում <<ինտեգրված կրթակարգի՝ այսպես կոչված նախագծային մոտեցումը>>: Հետագա տասնամյակների ընթացքում ուսումնական ծրագրի ինտեգրման մասին գաղափարներն ու մոտեցումները նոր հնչեղություն և ուղղվածություն ստացան: Այսպես՝ 1930-ական թվականներին երևան եկավ արմատական կրթակարգի շարժումը, իսկ 1940-50-ական թվականներին արդեն ձևավորվեցին պրոբլեմային ուսուցման ծրագրերը:

Ուսումնական ծրագրի ինտեգրման մեկ այլ ջատագով՝ Ջեյմս Բինը գտնում է, որ <<Ուսումնական ծրագրի ինտեգրումը պարզապես տարբեր առարկաների դասերի պլանի վերադասավորում կամ մակերեսային վերափոխումներ պահանջող կազմակերպչական միջոց չէ: Այն դպրոցի գոյության նպատակի մասին խորհրդածելու ձև է, համոզամունք, ըստ որի՝ ուսումնական ծրագրի աղբյուրները պետք է լինեն կյանքի առաջադրած խնդիրները, հարցերն ու անհանգստացնող իրողությունները>>:

1980-1990-ական թվականներին ուսումնական ծրագրերի ինտեգրման գործընթացում ձևավորվում է երեք մոտեցում՝ *բազմառարկայական, միջառարկայական և անդրառարկայական*: Շատ շուտով ակնհայտ դարձավ, որ աշակերտների արձագանքը ինտեգրված ուսումնական ծրագրերին շատ դրական է: Նրանք շատ են ոգևորվում իրենց ուսմամբ, ընդ որում թե ուսուցիչները և թե սովորողներն արդեն իրենց ուշադրության կիզակետում պահում են երեք տարբեր թիրախ-նպատակներ՝ ուսուցման բովանդակություն, հասարակության մեջ շփվելու հմտությունների ձեռքբերում և հետաքրքիր գործունեություն կազմակերպելու կարողություն:

Ուսումնական ծրագրերի ինտեգրումը մի գործընթաց է, որին բնորոշ են հետևյալ չորս գծերը.

1. Աշակերտներն ու ուսուցիչները համատեղ պլանավորում են ուսումնական ծրագրերը և սահմանում դրա իրագործման կարգը:

2. Ուսումնառության գործընթացի կենտրոնում սոցիալական տեսակետից նշանակալից թեմաներն են, որոնք բխում են աշակերտների հետաքրքրություններից ու նրանց հուզող հարցերից:

3. Ուսումնառությունն ընթանում է դպրոցական համայնքում ժողովրդավարական սկզբունքով: Դպրոցական համայնքի բոլոր անդամները, ուսուցիչներն ու աշակերտները հավասար մասնակցություն են ունենում որոշումների կայացմանը:

4. Ուսումնական ծրագիրն այլևս կազմված չէ առանձին առարկաներից:

Հիմնական կիզակետը հասարակասկն կարևորություն ունեցող և անհատին հուզող հարցերն են: Ուսումնական ծրագիրը հնարավորություն է տալիս նաև ավանդական առարկաների թեմաների ընդգրկում: Դրանք կարող են և պետք է ներառվեն ծրագրում, սակայն ոչ նախապես որոշված չափաքանակով ու հաջորդականությամբ: Տարբեր բնագավառներից և ոլորտներից հարկավոր է փնտրել, առանձնացնել տվյալ թեմային առնչվող տեղեկատվությունը կամ գաղափարները:

Ասվածից հետևում է, որ ուսումնական ծրագրի ինտեգրումը բնավ էլ չի անտեսում պետական պարտադիր ուսումնական ծրագրերը և ոչ էլ փոխարինում է դրանց: Իրողությունն այն է, որ պարտադիր բովանդակությունն այս դեպքում վերադասավորվում է այնպես, որ աշակերտներին իմաստակերտման հնարավորություն ընձեռվի: Ջեյմս Բինը գտնում է, որ «Ուսումնական ծրագրի իսկական ինտեգրման կշռադատված փորձերի համատեքստում գիտության ճյուղերը թշնամիներ չեն, այլ օգտակար և անհրաժեշտ դաշնակիցներ»:

Ինտեգրված ուսումնական ծրագրեր կազմելիս մանկավարժները պետք է պատասխանեն կրթությանը վերաբերող երեք կարևոր հարցերի.

- Ի՞նչն է այն ամենակարևորը, որ աշակերտները պետք է գիտենան:
- Ի՞նչն է այն ամենակարևորը, որ աշակերտները պետք է կարողանան անել:
- Ի՞նչպիսի մարդիկ ենք ցանկանում, որ աշակերտները լինեն:

Այս հարցերի պատասխանները մեզ տանում են դեպի գիտենալ-անել-լինել եռանկյան ստեղծումը: <<Գիտենալ>>-ն իր մեջ ներառում է փաստեր, գաղափարներ, թեմաներ և ընդհանրացումներ կամ տեսական հասկացություններ: <<Անել>>-ն ընդգրկման իմաստով ավելի սահմանափակ է (ոչ բոլոր գիտելիքներն են դառնում կարողություն). այն ներառում է այնպիսի հիմնավոր հմտություններ, ինչպիսին հաղորդակցությունն է, ինչպես նաև մի շարք բարձրակարգ հմտություններ, ինչպիսիք են վերլուծությունը, համադրումը (սինթեզ) և գնահատումը (ներկայացվում է ըստ Բլումի սանդղակի (տաքսոնոմիայի): <<Լինել>>-ը ներառում է դիրքորոշումներ, համոզմունքներ և գործողություններ, որ աշակերտները պետք է հանդես բերեն ու կատարեն:

Այս եռանկյան ստեղծման գործում կարևոր քայլ է հետահայաց պլանավորումը: Հետահայաց պլանավորումը շատ երկրներում ուսումնական ծրագրերի կառույցի հիմքն է: Ուսումնական ծրագրի կաղապարը հիմնված է այն սկզբունքների վրա, որոնք հատուկ են հետահայաց պլանավորման գործառությանը, որը Վիգինսը և Մըքթայը հանգամանորեն ներկայացնում են իրենց գրքում: Հետահայաց պլանավորման հիմնական սկզբունքը համապատասխանությունն է, որը սկզբունքային նշանակություն ունի հաջող ուսումնական ծրագրի ստեղծման գործում:

Ո՞րն է ինտեգրման խնդիրը: Ինչու՞ է այն անհրաժեշտ

Ինտեգրված ուսումնական ծրագիրը կապերի հաստատում է, ընդ որում, գլխավոր շեշտը դրվում է աշակերտի առաջադիմության վրա: Ինտեգրված ուսումնական ծրագիրը մի յուրատեսակ կամուրջ է աշակերտի՝ շարունակ աճող առաջադիմության և ուսումնական ծրագրին համապատասխան զբաղվածության քննարկումների խնդիր է եղել դեռևս անցյալ դարում: Հասարակագիտական առարկաների ինտեգրման խնդիրը, չնայած այն բանին, որ համեմատաբար նոր է ծառայել մանկավարժների առջև, չափազանց կարևոր է ու հրատապ: Բանն այն է, որ բացի աշակերտներին հիմնական գիտելիքներ տալու և հմտություններ զարգացնելու պարտավորությունից, դպրոցները նաև պատասխանատվություն են կրում նրանց ժողովրդավարական հասարակարգում ապրելուն նախապատրաստելու համար: Ուսումնական ծրագրի ինտեգրումը զարգացնում է ժողովրդավարական հասարակության կյանքին արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ հմտություններ: Դեռահասները սովորում են, թե ինչպես կարելի է բազմակարծիք հասարակության մեջ հիմնախնդիրները համատեղ լուծել: Նրանք սովորում են գտնել, արժևորել, համադրել և օգտագործել

տեղեկատվության տարբեր տեսակները՝ հիմնախնդիրներն առավել հստակ պատկերացնելու և կշռադատված քայլեր ձեռնարկելու, իրենց տեղական համայնքների և ազգի զարգացմանն առնչվող որոշումներ կայացնելու համար: Ուսումնական ծրագրի ինտեգրման դեպքում աշակերտներն անմիջականորեն ժողովրդավարության փորձ են ձեռք բերում:

Ուսումնական ծրագրի ինտեգրման առավել լայն մասշտաբներով կիրառումը լիովին արդարացված է, քանի որ այն առավել արդյունավետ ու հաջող լուծումներ է տալիս կրթական համակարգի աշխատակիցների, ծնողների և ընդհանրապես քաղաքացիների կողմից ընդունված կրթության հիմնական նպատակային խնդիրներին:

Հայտնի է, որ հասարակագիտությունը նպաստում է հասարակական գիտությունների՝ տնտեսագիտության, աշխարհագրության, մարդաբանության և սոցիոլոգիայի ինտեգրմանը: Ավելին, հասարակագիտությունն օգնում է քննադատական ու ստեղծագործական մտածողության և որոշումների կայացման հմտության զարգացմանը, քանի որ աշակերտները սովորում են ստանձնել ժողովրդավարական հասարակության պատասխանատու քաղաքացիների իրենց դերը: Մյուս բովանդակային գիտակարգերը, ինչպիսիք են լեզուն, արվեստը, պատությունը, մաթեմատիկան, բնագիտությունը, նույնպես իրենց մասն ունեն հասարակագիտության մեջ: Դրանք ներառում են այնպիսի հիմնական սկզբունքներ, ինչպիսիք են.

1. Հարգանք աշակերտի և ուսուցչի նկատմամբ,
2. Վստահություն ուսուցչի նկատմամբ՝ որպես ուսումնական գործընթացը հեշտացնողի
3. Աշակերտների փորձարկելու ու ռիսկի դիմելու ջանքերի խրախուսում:

1890-ական թվականների վերջերին և 1990-ական թվականների սկզբներին Ջոն Դյուին և նրա ուսուցիչը Ֆրենսիս Փարքերը հիմնեցին այսպես կոչված «Առաջադիմական կրթություն» շարժումը: Դյուին առաջ քաշեց «գործնական ուսուցման» գաղափարը, ըստ որի ուսուցումն արդյունավետ է միայն այն ժամանակ, երբ աշակերտներն ակտիվորեն մասնակցում են ուսումնառության գործընթացին: Հետագայում համընդհանուր ճանաչում ստացավ միջառարկայական ուսուցման գաղափարը, որը ենթադրում է միաժամանակ մեկից ավելի առարկաներից թեմատիկ բաժինների ուսուցում: Այս մոտեցումն իր հաստատուն տեղն ուներ մինչև մեր օրերը:

Ինտեգրման նպատակն ու խնդիրները ճիշտ հասկանալու և ինտեգրումն արդյունավետ կազմակերպելու համար չափազանց կարևոր է ճիշտ պատկերացում ունենալ ինտեգրման համատեքստի մասին որպես մի հասկացության, որն ունի ինտելեկտուալ պատմություն: Գոյություն ունեցող տեսակետներից մեկի համաձայն՝ մարդիկ աշխարհը համախմբելու համար արհեստականորեն ստեղծել են գիտության ճյուղեր՝ հաճախ ելնելով իրենց պետության կարիքներից:

Այսօր հաճախ կարելի է մանկավարժների հասցեին քննադատական խոսքեր լսել այն մասին, որ նրանք բավարար չափով չեն ուսուցանում սովորողներին անհրաժեշտ հիմնական հմտությունները: Ոմանք էլ գտնում են, որ այն հիմնական հմտությունները, որոնք անհրաժեշտ են 21-րդ դարում ապրող մարդուն, բնավ էլ նույն հմտությունները չեն, որոնք մենք այսօր դասավանդում ենք: Մանկավարժները դժվարին կացության մեջ են, և այստեղ նրանց օգնության է գալիս ինտեգրումը:

Առարկաների ինտեգրումը, նվազեցնելով բովանդակության և հմտությունների կրկնությունը, ավելի շատ սովորեցնելու հնարավորություն է տալիս միաժամանակ նոր պատկերացում ձևավորելով հիմնական հմտությունների նշանակության մասին:

Ինտեգրված ուսումնական ծրագրերի անհրաժեշտությունը հիմնավորվում է նաև մեկ այլ պատճառով: Այն աշակերտները, որոնք դուրս են մնում ուսումնառության գործընթացից, չեն գիտակցում դպրոցական կյանքի իմաստը: Ինտեգրումն այնպես է կապում տարբեր առարկաների ընդգրկման ոլորտները, որ դրանք արտացոլում են իրական աշխարհը: Երբ մենք ուսումնական ծրագիրը տեղափոխում ենք մարդկային կենսափորձի պայմաններ ու միջավայր, այն ակնհայտորեն նոր իմաստ է ստանում: Կենսական բազմաթիվ հարցեր լուծելիս և ամենատարբեր խնդիրների բախվելիս աշակերտները սովորաբար դուրս են գալիս ուսումնական առարկաների սահմաններից և ապավինում են այդ նույն առարկայի ուսուցման արդյունքում ձեռք բերած մտածողության բարձրակարգ հմտություններին: Ինտեգրման անհրաժեշտությունը հիմնավորող մյուս կարևոր նկատառումը հիմնվում է մարդկային ուղեղի մասին վերջերս կատարած հետազոտությունների վրա, որոնք ցույց են տալիս, որ սովորելու համար ուղեղը որոնում է մոդելներ ու փոխկապակցություններ՝ որպես իմաստավորման ձև: Եթե մարդը կապեր հաստատելով է սովորում, ապա ուսուցումն էլ անհրաժեշտ է կազմակերպել կապերի միջոցով: Ինտեգրված ուսումնական ծրագրերի զարգացումը

շատ տեսակետներից համընդհանուր է: Ինտեգրումը գիտակցված փորձ է, որը կապում է ուսումնական ծրագրի այն ոլորտները, որոնք նախկինում կապակցված չէին:

Ո՞ր հիմնահարցերի վրա պետք է ուշադրություն դարձնել ուսումնական ծրագրի ինտեգրված ուսումնառության ժամանակ:

Ուսումնական ծրագրերի ինտեգրումը պահանջում է երբեմն բնական, երբեմն հիմնովին տարբեր գիտելիքների ու հմտությունների և աշակերտների կենսափորձի ու ծագման միջև կապերի ընդլայնում: Ուսումնական ծրագրերի ինտեգրված ուսումնառության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ հարցերի ճիշտ կազմակերպման վրա: Սրանց խախտման դեպքում ինտեգրումը կարծեզրկվի և կստանա ձևական բնույթ:

1. Ուսումնառությունը և գնահատումն ավելի շատ գիտելիքի կիրառում են պահանջում, քան պարզապես փաստերի սերտում:

2. Ուսումնառությունը պետք է կազմակերպել մարդու՝ ըմբռնելու կարողությանը համապատասխան, ինչպես ուղեղն է մոդելների ու կապերի միջոցով մշակում տեղեկատվությունը՝ շեշտը դնելով կապակցվածության վրա, այնպես էլ ուսումնառության ընթացքում աշակերտների ընկալման համար անհրաժեշտ է ստեղծել բազմաթիվ կապեր ու մոդելներ:

3. Քանի որ ուսումնական առարկաների բովանդակությունը, ինչպես գիտելիքն ընդհանրապես, կարծրացած, կայուն և ամբողջական չէ, կենսական կարևորության խնդիրները չեն կարող լուծվել մեկ առարկայական գիտելիքի միջոցով: Անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել շարունակ ինքնուրույնաբար լրացնել իրենց գիտելիքները, ձեռք բերել անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ, այլ խոսքով՝ նրանց սովորել սովորեցնել:

4. Ինտեգրված ուսումնական ծրագիրն օգնում է ուսուցիչներին և աշակերտներին հաղթահարել առարկայի սահմանների վերաբերյալ կարծրացած ու անհիմն ըմբռնումները:

Ավելի քան 70 տարի կրթության ոլորտում կատարած հետազոտական աշխատանքների արդյունքում ակնհայտ դարձավ, որ աշակերտների գիտելիքներն ավելանում են, երբ ուսումնական ծրագրերը զարգանում են ինտեգրացիայի ուղղությամբ: Այսպիսով, մասնագետ գիտնականների մի սովոր խումբ հարցականի տակ է դնում ուսումնական ծրագրերի՝ առանձին առարկայական մոտեցումները և քվեարկում ինտեգրման օգտին:

Ինչպիսի՞ն պետք է լինի ինտեգրման գործընթացը

Ինտեգրված թեմատիկ միավորներ կարող են կազմել ինչպես անհատ ուսուցիչներ, այնպես էլ տարբեր առարկաների երկու և ավելի ուսուցիչներ, որոնք դասավանդում են նույն աշակերտներին: Այս վերջին դեպքում ուսուցիչները պետք է իրականացնեն հետևյալ աշխատանքները.

1. Յուրաքանչյուր ուսուցիչ իր առարկայի կամ դասընթացի համար սահմանում է երկու տեսակի արդյունք, որոնցից մեկը պետք է վերաբերի ինչ-որ բանի, որ աշակերտը կարող է *անել*, մյուսը պետք է վերաբերվի ինչ-որ կարևոր բանի (որևէ հասկացություն կամ հիմնական գաղափար), որ աշակերտը պետք է *իմանա*: Խումբը համախմբում է թվարկված բոլոր արդյունքները և համակարգում:

2. Երբ բոլոր ուսուցիչները սահմանել են իրենց առարկայի գծով ակնկալվող արդյունքները և կազմել ցանկ, խումբը ձեռնարկում է հնարավոր համակարգող կենտրոնների տեսակները որոշելու գործը, որոնք պետք է բավարարեն ցուցակում եղած բոլոր ակնկալվող արդյունքներին (նպատակահարմար է այդ անել <<Մտագրոհ>> կամ <<Մտքերի տարափ>> կոչվող մեթոդի օգնությամբ): Այնուհետև առանձին-առանձին քննարկվում են նաև մտագրոհի արդյունքում գրի առնված բոլոր կենտրոնները և ընտրում մի կենտրոն, որը լավագույնս բավարարում է անկախության, ընդհանրացման, իմաստի և այլ չափանիշներին:

3. Խումբը համակարգող կենտրոնի համար որոշում է մի հիմնական (ուղենիշ հարց), ապա սահմանում նրա բաղադրիչ ենթահարցերը:

4. Խումբը որոշում է գնահատման չափորոշիչները և կազմում գնահատվող առաջադրանքների ցանկ:

5. Խումբը <<մտագրոհով>> սահմանում է նաև պոտենցիալ գործունեությունները՝ տարբեր առարկաների բովանդակային ընդգրկման և հմտությունների սահմաններում՝ օգտագործելով նաև ինտերնետի հնարավորությունները:

6. Խումբը ինտեգրված միավորների համար ընտրում է առաջադրանքների տեսակները, գնահատման չափանիշները, ինչպես նաև ամեն օրվա համար դասերի թեմաներն ու ընթացքը:

2.2 Ինտեգրված ուսումնական ծրագրերի տեսակները

Ուսումնական ծրագրի ինտեգրումը կարող է տարբեր ձևեր և համակցություններ ունենալ: Ինտեգրման վերաբերյալ հակասական ընկալումները հաճախ ակամա դիմադրություն և հակամարտության պատճառ են դառնում: Այսպես, գոյություն ունեցող տեսակետներից մեկի կողմնակիցները գտնում են, որ խմբերն իրենք, առաջնորդվելով համատեղ գործունեության հեռանկարով, պետք է իմաստավորեն, թե ինչն է կարևոր, և դրա շուրջը կառուցեն իրենց ուսումնառությունը, իսկ մյուսները, տեսնելով առաջինների խանդավառությունն ու ջանքերը, աստիճանաբար կմիանան նրանց: Ուսուցչի դերն այստեղ ակտիվ խմբի աշխատանքը մյուսների և հենց իրենց համար տեսանելի դարձնելն է: Այս հանգամանքը նպաստում է, որ պատասխանատվություն ստանձնելու հարցում անվճռականություն ցուցաբերողները հաղթահարեն իրենց կասկածներն ու մտավախությունները և միանման նախաձեռնող խմբին:

Ուսումնական ծրագրի ինտեգրումը <<երկնքից իջած>> նորամուծություն չէ. Նրանում հնից պահպանված շատ բան կա, սակայն, ցավոք, ինչպես հաճախ է լինում կյանքում, մարդիկ, հնից կառչելով, դիմադրով են նորին ոչ թե այն պատճառով, որ չեն ընդունում այն, այլ որովհետև սովոր են հնին և չեն ուզում այն կորցնել: Արդյունքում ստացվում է այնպես, որ դեպի նորը սկսված ճանապարհորդության սկզբին արդեն իր մեջ ավարտ է ներառում: Մակայն տարիների ուսումնառությունները ցույց են տալիս, որ մանկավարժության մեջ նորամուծությունները հիմնականում կատարվում են ավելի շատ արդեն եղածին նորն ավելացնելով, քան թե եղածը դուրս մղելով: Նկատենք, որ այստեղ ևս վտանգ կա ավանդապահ ուսուցիչների համար: Չէ որ այս դեպքում ավելանում է նրանց աշխատանքային ծանրաբեռնվածությունը, որը, խոստովանենք, ոչ միշտ է ցանկալի: Մասամբ դա է լինում այն տխուր իրողության պատճառը, որ բարի մտադրություններն անգամ երբեմն մերժվում են, իսկ դպրոցները վերադառնում են իրենց հին գործելակերպին: Ահա թե ինչու հենց սկզբից անհրաժեշտ է ճշգրտորեն որոշել, թե ինչը պետք է շարունակել և ինչից հրաժարվել: Ընդ որում, որքան նորամուծությունները սահուն ու առանց հակասությունների տեղի ունենան, այնքան ավելի արդյունավետ կլինեն: Փորձը ցույց է տվել, որ կրթական բարեփոխումների գործընթացում վիրահատական ու կտրուկ միջամտություններն այնքան էլ ցանկալի չեն, ուստի պետք է ուշադիր լինել ընդդիմադիր կողմի կարծիքների ու զգացմունքների նկատմամբ՝ զգուշանալով սուր բախումներից և փորձելով սահուն ու <<անցավ>> կատարել

նորամուծությունը: Չէ որ նրանք ակնհայտորեն ստիպված պիտի լինեն որոշ բաներից հրաժարվել, իսկ դա միշտ էլ դժվար է լինում: Այսպես, օրինակ, ինտեգրված ուսումնական ծրագիր կազմելիս նրանք հարկադրված կլինեն մի կողմ թողնել ուսումնական ծրագրի հին մոդելները: Որպեսզի դա առանց դժգոհության անեն, պետք է համոզվեն դրա անհրաժեշտության և, որ ավելի կարևոր է, արդյունավետության մեջ: Վերջինս իրականություն դարձնելը մեծապես կախված է նաև մանկավարժի՝ սոցիալական փոփոխությունների ժամանակ առաջնորդության դերի գիտակցումից:

Ստորև ներկայացվում են ուսումնական ծրագրի ինտեգրման Դրեյվի առաջարկած երեք տարբեր եղանակները:

- **Բազմառարկայական մոտեցում**, որը կենտրոնանում է նույն թեման շոշափող առանձին առարկաների վրա, այս դեպքում կենտրոնում դրվում են առանձին գիտություններ (ուսումնական առարկաներ), որոնք միավորվում են ընդհանուր թեմայի շուրջ:

- **Միջառարկայական մոտեցում**, որը կենտրոնանում է նույն թեման շոշափող առանձին առարկաների վրա, և այս դեպքում կենտրոնում դրվում է այն ընդհանուրը, որ գտնվում է ուսումնական ծրագրի մյուս կողմում:

- **Անդրառարկայական մոտեցում** կամ իրական աշխարհի **մոտեցում**, որը կենտրոնանում է նույն թեման շոշափող առանձին առարկաների վրա: Սա վերաբերում է այն ուսումնական ծրագրին, որը դուրս է գալիս առարկաների սահմաններից:

Այս երեք մոտեցումների հիմքում ընկած են իմացաբանական լուրջ խնդիրներ: Յակոբսն, օրինակ, առաջարկում է, որ աշակերտներն ուսումնասիրեն այնպիսի իմացաբանական հարցեր, ինչպիսիք են <<ի՞նչ է գիտելիքը, և ինչպե՞ս կարող ենք առավել արդյունավետ յուրացնել այն>>:

Վերը թվարկված երեք մոտեցումներից յուրաքանչյուրն այս հարցին յուրովի է պատասխանում, ընդհանուրը միայն այն է, որ բոլոր երեքն էլ տանում են դեպի ինտեգրում: Յուրաքանչյուր մոտեցում հարցի մեջ ճանաչողական մի նրբերանգ է կարևորում և յուրովի է պատասխանում այն հարցին, թե ինչն է կարևոր իմանալ, ունի ուղենիշային ընդհանուր պատկերացումների իր շրջանակը, վերջնարդյունքին հասնելու համար անհրաժեշտ կապերի տեսակները, գնահատման ռազմավարությունները: Քննարկենք յուրաքանչյուր տեսակը առանձին-առանձին:

ԲԱԶՄԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Այս մոտեցման կողմնակիցները կրթակարգը դիտում են մի առարկայի ուսանյակի միջոցով, որն իր հերթին կապված է մյուս առարկաների հետ: Սա մի հանգամանք է, որն ակնհայտորեն դրական արդյունքների է հանգեցնում և բազմաառարկայական մոտեցման առավելություններից մեկն է: Այն ուսուցիչները, ովքեր առաջնորդվում են այս մոտեցմամբ, առարկաների չափորոշիչները մշակում են մի թեմայի շուրջ՝ որպես ուղենիշ ունենալով հետևյալ հարցադրումը՝ «[՞]ինչն է կարևոր, որ սովորողներն իմանան այս մասին տարբեր առարկաների շրջանակներում>>: Այս մոտեցումն առանձին առարկաների ուժեղ կողմերին չի դիպչում և քաջալերում է գիտելիքների տարբեր բնագավառների միջև կապերի հաստատումը՝ դրանով մեծացնելով ուսուցման արդյունավետությունը: Յուրաքանչյուր առանձին առարկայի ընթացակարգային գիտելիքներն ու հմտությունները ներկայացվում են մյուսների հետ սերտ կապակցման մեջ: Բազմաառարկայական մոտեցման դեպքում առարկան կարել է հեշտությամբ տարբերել իրեն բնորոշ ռազմավարությունների շրջանակում, և ուսուցիչը, որը հավանաբար խնդրին կմոտենա ըստ իր մասնագիտացման ոլորտի, կարող է շրջահայացորեն անփոփոխ թողնել առարկայի ընթացակարգերը:

- Ուսումնառության վերջնարդյունքները և գնահատում

Ուսումնառության վերջնարդյունքները կարող են հիմնվել առարկայի ընթացակարգային գիտելիքների վրա: Երբեմն սրանք գիտելիքի, հմտության և զգացմունքների ինչ-որ տարբերակ են ներկայացնում: Գնահատումն այս ընթացակարգերի կատարելագործում ունի իր մեջ:

Ուսումնառության վեջնարդյունքները կարող են չարտացոլել իրական կյանքը, որովհետև դրանք սահմանափակվում են կոնկրետ բովանդակային մանրամասնություններով, որոնք կրթակարգն է շարժման մեջ դնում:

ՄԻԶԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄ

Այս մոտեցման կողմնակիցները ուսումնական ծրագիրը կազմում են աշակերտների ընդհանուր գիտելիքների շուրջ: Ի տարբերություն բազմաառարկայական մոտեցման այս դեպքում շեշտը թեմաներից տեղափոխվում է դեպի առանձին առարկաների տիրույթները և կենտրոնանում առարկաների ընդհանրությունների վրա: Միջառարկա-

յական մոտեցումը շեշտը դնում է մետաճանաչողության վրա և սովորել սովորեցնում: Բովանդակության կարևորությունը նվազում է, և ուղենիշ հարցադրումը դառնում է. <<ինչպե՞ս կարող ենք աշակերտներին բարձրակարգ ունակություններ սովորեցնել>>: Առարկաների տիրույթների ինտեգրման ճանապարհով աշակերտները սովորում են, որ բարձրակարգ մտածողության հմտությունները ընդհանուր են և կարող են օգտագործվել նաև դասարանից դուրս: Այս մոտեցումը դիպուկ են նկարագրում Յակոբսը և Փալմերը: Նրանք գտնում են, որ այս մոտեցման անիվը կարող է ընդգրկել այնքան առարկա, որքան կրթակարգ կազմողները ցանկանում են, ընդամին, համոզիչ կերպով ցույց են տալիս, որ ոչ մի ոլորտ տեսադաշտից դուրս չի մնում: Յակոբսը նշում է, որ այնպիսի մոդելը, ինչպիսին Բլումի սանդղակն է, լավ համակարգող է և ծանոթ է ուուցիչներին: Մի քանի առարկաների տիրույթները կարող են խնդիր կամ կարևոր հարց լուծել, որը հետազոտում է մի շարք հարցեր, որոնք հաջորդում են Բլումի սանդղակին և շեշտում ընդհանուր ընթացակարգերը:

- Ուսումնառության վերջնարդյունքները և գնահատումը

Միջառարկայական մոտեցման դեպքում ուսումնառության վերջնարդյունքը պակաս կարևոր է: Ճանաչողական, հուզական և հմտությունների բնագավառների միջև եղած տարբերությունը գործնականում հաճախ անհետանում է, և վերջնական արդյունքները խառնվում են: Նրանք, ովքեր փորձում են հակառակն անել, հայտնվում են բռնությամբ հարմարեցված վիճակում: Առարկաների ոլորտներում շատ ուսուցման արդյունքներ նույնն են: Առանձին առարկաներից սովորողների գիտելիքների գնահատումը դառնում է ավելի շատ դրսևորման վրա հիմնված և առարկայի սահմաններից դուրս: Շեշտը արդյունքից տեղափոխվում է դեպի գործընթաց, որը դեռ կարող է հաջորդականորեն արժևորվել, ինչպես <<ուղենիշներում>> կամ <<զարգացման մակարդակներում>>, որոնք չափում են աշակերտի դրսևորումը:

Միջառարկայական մոտեցումը շեշտը տեղափոխում է մետաճանաչողության և սովորել սովորեցնելու վրա: Բովանդակության կարևորությունը նվազում է: Հարցը հետևյալն է. <<ինչպե՞ս աշակերտին սովորեցնել բարձրակարգ կարողություններ>>: Առարկաների ոլորտներն իրար միացնելով՝ աշակերտները սովորում են, որ բարձրակարգ մտածողության հմտություններն ընդհանուր բնույթ ունեն և կարող են օգտագործվել դասարանից դուրս:

- Յուրացման վերջնարդյունքները և գնահատումը

Միջառարկայական մոտեցման դեպքում սովորելու արդյունքները պակաս որոշակի են, քան բազմառարկայականի դեպքում: Տարբերակումը ճանաչողականի, հուզականի և հմտությունների միջև հաճախ գործնականում վերանում է, և արդյունքներն արտահայտվում են <<միահյուսված>> ձևով: Սովորելու արդյունքներից շատերը նույնական են լինում տարբեր առարկաների ոլորտում:

Գնահատումը հիմնվում է ավելի շուտ առաջադրանքների վրա և անցնում առարկաների սահմանները: Շեշտն սկսում է տեղափոխվել ավելի շուտ գործընթացի, քան արդյունքների վրա: Սակայն գործընթացը դարձյալ կարելի է գնահատել հաջորդաբար, ինչպես որոշակի չափանիշների և աճի մակարդակների հաղթահարում, որոնցով չափվում և գնահատվում է աշակերտի կատարած առաջադրանքը:

ԱՆԴՐԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ / ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄՈՏԵՑՈՒՄ

Ինտեգրման անդրառարկայական մոտեցման դեպքում ուսուցիչները ուսումնական ծրագիրը մշակում են աշակերտների հարցերի և հետաքրքրությունների հիման վրա: Աշակերտները հանդես են բերում կյանքի հմտություններ, երբ միջառարկայական և կոնկրետ առարկայական հմտությունները օգտագործում են իրական կյանքում: Անդրառարկայական ինտեգրման երկու եղանակ կա՝ նախագծերի վրա հիմնված ուսուցում և ուսումնական ծրագրի համաձայնեցում:

Նախագծերի վրա հիմնված ուսուցման ժամանակ աշակերտներն աշխատում են տեղական խնդիրների լուծման վրա: Սկզբում ուսուցիչներն ու աշակերտներն ընտրում են ուսումնասիրության համապատասխան թեմա, որի հիմքում ընկած են աշակերտների հետաքրքրությունները, ծրագրի չափանիշներն ու չափորոշիչները և տեղային ռեսուրսները: Ուսուցիչը բանավոր կամ գրավոր հարցերի օգնությամբ պարզում է, թե աշակերտներն ինչ գիտեն ուսումնասիրվող նյութի վերաբերյալ և օգնում է նրանց հետազոտության համար հարցեր առաջադրել: Ուսուցչի կարևոր խնդիրներից մեկն էլ աշակերտներին համապատասխան նյութերով ապահովելն է: Նախագծային ուսուցման ժամանակ հենց սկզբից ուսուցիչների և աշակերտների միջև այս իմաստով սկսվում է սերտ համագործակցություն: Աշակերտներն էլ իրենց համագործակցություններն ու բացահայտումներն են ցույց տալիս ուսուցչին, դրանք դնում համընդհանուր քննարկման՝ այդպիսով վերանայելով ու վերաարժևորելով նախագիծը:

Ուսումնական ծրագրի տարբերակի հետ համաձայնության գալու հարցում նույնպես լիակատար համագործակցություն է հաստատվում, և աշակերտների հարցերը դրվում են ուսումնական ծրագրի հիմքում: Անդրառարկայական մոտեցման դեպքում ուսուցիչ-աշակերտ կապերն այնքան սերտ ու այնքան շատ են, որ թվում է սահման չունեն: Թեման, ռազմավարությունները և հմտությունները միախառնվում են, երբ թեման հայտնվում են իրական կյանքում: Առանձին առարկաները դուրս են գալիս իրենց սահմաններից, բայց բնականորեն մնում են իրենց փոխադարձ կապերի մեջ: Անդրառարկայական մոտեցման դեպքում հարցադրումը դառնում է՝ «<ինչպե՞ս աշակերտներին սովորեցնել դառնալ ապագայի պիտանի քաղաքացիներ>>»: Դրա համար անհրաժեշտ են այնպիսի հմտություններ, ինչպիսիք են փոփոխությունների կառավարումը, երկրնորանքների հետ գործ ունենալը, հետևողականությունը, հաստատակամությունը, վստահությունը, քննադատական մտածողությունը և այլն: Շեշտը դրվում է իմաստի և կենսակենտրոն մոտեցման իմաստի վրա, այսինքն՝ գիտելիքը ուսումնասիրվում է այնպես, ինչպես այն հանդես է գալիս իրական կյանքում կամ մշակութային համատեքստում: Բովանդակությանը հատուկ կարևորություն չի տրվում, և նրա ընտրությունն էլ ավելի շուտ պայմանավորվում է թեմայով և աշակերտների հետաքրքրություններով, քան կանխորոշված ուղղորդվող հարցերով:

- Ուսումնառության վերջնարդյունքները և գնահատումը

Անդրառարկայական մոտեցումը շեշտադրում է արմատական ուսուցումը, որը կարևոր է ապագայում ապրելու համար: Ծրագրի հեղինակներն ընդունում են, որ ապագան բոլորովին էլ այն չէ, ինչ որ կա հիմա կամ եղել է սրանից առաջ, ուստի աշակերտները հարկադրված են կատարել այնպիսի աշխատանք կամ քննարկել այնպիսի հարցեր, որոնք դեռ գոյություն չունեն, ուրեմն և իրենք չեն կարող հանդիպել դրանց իրենց առօրյա կյանքում: Նույնը վերաբերում է կյանքի բոլոր ոլորտներին՝ գիտատեխնիկական առաջընթացին (տեխնոլոգիաները, որ օգտագործելու են նրանք, դեռ չեն հայտնագործվել), քաղաքաշինությանը (գբոսայգիներն ու պուրակները, ուր գբոսնելու ն նրանք, դեռ չեն հիմնվել), տնտեսությանը (ձեռնարկությունները, ուր աշխատելու են, դեռ չեն բացվել), մշակութային (աստղերը, որ փայլելու են մշակութային երկրակամարում, դեռ նոր են լույս հավաքում) և այլն: Կյանքի հմտություններն առաջնակարգ են դառնում. դրանք ներառում են նաև բարձրակարգ մտածողության հմտություններ, սակայն այստեղ մեծ վերապահություն կա. դա երբեք չի արվում ապրել սովորելու հմտությունների հաշվին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Այսօր մեր հասարակության զարգացման արդի փուլում նկատվում են նորարարական միտումներ՝ ուղղված ուսումնական գործընթացի բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը:
- Հայաստանի լեզվակրթության քաղաքականությունում նույնպես դրական միտում է որդեգրվում համաշխարհային ինտեգրման միասնական կրթական տարածք՝ հաշվի առնելով կրթության, մշակույթի ազգային առանձնահատկություններն ու ավանդույթները:
- Այսօր մեծ տեղ է տրվում տարբեր առարկաների ինտեգրված ուսուցմանը, քանի որ կրթության բովանդակության լիովին ընկալումը հնարավոր չէ առանց միջառարկայական կապերի գիտակցման: Գիտելիքների մատուցումն առանձին առարկաներից չի համապատասխանում ներկայացվող ժամանակակից պահանջներին, այն աշխարհի մասին մասնատված, ոչ ամբողջական պատկերացում է տալիս:
- Ինտեգրված ուսուցման իրականացմանը նպաստում են միջառարկայական կապերի ուժեղացումը, միավորված դասընթացները, ինտեգրված ծրագրերը, թեմատիկ միավորները, որոնց հիմքում ընկած է միասնական մոտեցում երևույթների ընկալմանը, գիտակցմանն ու ըմբռնմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կարծում եմ՝ այս ամենը կիրառելի է և առաջարկում եմ ինտեգրված թեմատիկ պլանով կազմված դասեր հաճախակի կիրառել՝ ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Դասավանդման ընթացքում ես հաճախակի եմ անցկացնում ինտեգրված դասեր, ինչի արդյունքում արձանագրվում է տեսանելի արդյունք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանյան Լ. և ուրիշներ, Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսությունն ու պրակտիկան, Երևան, 2004, 131 էջ
2. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Ինտեգրացված թեմատիկ միավորներ, ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների պատրաստման ու վերապատրաստման համար, ԱՅՐԵՔՍ, Երևան, 2003, 256 էջ
3. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՐԵՔՍ, Երևան, 2001, 320 էջ
4. ԱՅՐԵՔՍ, Թեմատիկ միավորների ժողովածու, ձեռնարկ միջին դպրոցի ուսուցիչների և ուսուցիչ-վերապատրաստողների համար, Տիգրան Մեծ, Երևան, 2005, 352 էջ
5. Արնաուդյան Ա., Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթադաստիարակչական համալիր ծրագրի ստեղծման և ինտեգրման մոտեցումներ, ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՐԵՔՍ, Երևան, 2002, 312 էջ
6. Արնաուդյան Ա., Դավթյան Մ. և ուրիշներ, Սեմինար պարապմունքների ուղեցույց, ձեռնարկ ուսումնական ծրագրեր մշակող մասնագետների համար, ԱՅ-ԲԵՔՍ, Երևան, 2002, 272 էջ
7. Հանրակրթության պետական կրթակարգ, Կրթության ազգային ինստիտուտ, Երևան, 2004, 111 էջ
8. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ, ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Նորք գրատուն, Երևան, 2005, 294 էջ
9. Պետրոսյան Հ. և ուրիշներ, Մասնագիտական կրթության նոր տեխնոլոգիաների չափաբերման, որակի ապահովման և իրազեկությունների ձևավորման հիմնահարցեր, ԱՆ-ՋՈՆ, Երևան, 2009, 97 էջ
10. Золян С. Т. Стратегия лингвистического образования в Армении. Сб. м-лов

межд. конф., Цахкадзор, 2008, с. 11-16

- 11.Соболева Е. А. Принципы интеграции национального и над национального ценностных ориентиров в обучении иностранным языком. Преподавание иностранных языков и культур в начале XXI столетия: инновации и традиции. Сб. межд. науч-методич. сем. Лемпертовские чтения-X, 2008, Пятигорск, с. 242-246

Հավելված

Թեմատիկ միավոր

Միջառարկայան դասընթաց

Դասարան՝ առաջին

Թեման՝ Ա հնչյուն-տառի ուսուցում

Նպատակը՝ սովորեցնել Ա հնչյունը և նրա տառերը:


Ուսումնառության վերջնարդյունքները՝

- աշակերտները կկարողանան տարբերել հնչյունը տառից
- կկարողանան գրել Ա/ա տառը
- կկարողանան կարդալ ծանոթ առարկաների անունները, հաշվել վանկերի և հնչյունների քանակը, գտնել հնչյունի դիրքը բառում
- հնչյունային գծապատկերում ներկել ձայնավորին համապատասխանող վանդակը՝ մյուսներից առանձնացնելու նպատակով
- կկարողանան բավարարել հաղորդակցվելու պահանջը, կդրսևորեն ինքնարտահայտման կարողություններ
- կկարողանան լսել, խոսել, մտքերը հասկանալի ձևակերպել
- կհարստացվի բառապաշարը
- կձևավորվի արտահայտիչ արտահայտվելու կարողություն
- կկարողանան հաղորդակցվելիս ճիշտ օգտագործել դիմախաղը, շարժումներ, կգարգանա երևակայությունը
- կկարողանան արտահայտել խոսքային մտադրությունը
- կդրսևորեն տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն
- կգարգանա երաժշտառիթմական զգացողությունը

Գերիշխող առարկան՝ մայրենի

Ինտեգրված առարկաները՝ երաժշտություն, կերպարվեստ, թատրոն, մաթեմատիկա, ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա

Դասընթացի տևողությունը՝ 90 րոպե



Չափորոշիչներ

Մայրենի-աշակերտը պետք է կարողանա

- Այբբենարանում զետեղված թեմատիկ նկարի վերաբերյալ պատմություն հորինել՝ պահպանելով պատմվածքի տրամաբանական հաջորդականությունը
- Գրել Ա ա տառերը, տարբերել տպագիր տառերը ձեռագիր տառերից, մեծատառն ու փոքրատառը, ճանաչել պատկերագրերը
- Անվանել առարկայական նկարները, կատարել հնչյունային վերլուծություն
- Գտնել հնչյունի դիրքը բառում
- Հնչյունային գծապատկերում ներկել ձայնավորին համապատասխանող վանդակը, առանձնացնել ա-ն
- Ուսուցանվող հնչյունը՝ ա-ն, առանձնացնել բառից և օգտագործել բառասկզբում, բառամիջում, բառավերջում
- Պահպանել հիգիենայի և վայելչագրության կանոնները
- Տառը գրել օդում, պատկերն ստանալ կորիզներով

Երաժշտություն-աշակերտը պետք է կարողանա

- Տարբերել երաժշտության ռիթմը
- Կատարել տարբեր բնույթի և բովանդակության երգեր
- Երգել արտահայտիչ, գեղեցիկ, զգալ երգի հմայքը

Կերպարվեստ-աշակերտը պետք է կարողանա

- Ընկալել պատկերվող օբյեկտի ձևը
- Ճիշտ օգտագործել գույներն ու երանգները
- Զանազանել պատկերի մեջ գլխավորն ու երկրորդականը
- Ճիշտ տեղադրել պատկերը
- Աշխատանքն ավարտել ժամանակին
- Մեկնաբանել սեփական աշխատանքը
- Աշխատել թեմային համապատասխան

Ֆիզկուլտուրա-աշակերտը պետք է կարողանա

- Շարք կազմել, շարքում գտնել տեղը, ցուցաբերել նախաձեռնություն, փոխօգնություն, ձեռք բերել համագործակցային կարողություններ

Տեխնոլոգիա-աշակերտը պետք է կարողանա

- Տարբեր առարկաներից ստանալ տպագիր և ձեռագիր Ա ա տառեր

Մաթեմատիկա-աշակերտը պետք է կարողանա

- Համրել բառի ձայնավոր և բաղաձայն հնչյունների քանակը
- Կանգնել զույգ-զույգ

Թատրոն-աշակերտը պետք է կարողանա

- Արտահայտիչ արտահայտվել
- Արտահայտել այս կամ այն խոսքային մտադրությունը
- Դրսևորել տարբեր իրավիճակներում արտահայտվելու կարողություն
- Ընտրել ձայնի համապատասխան նրբերանգներ